

Մուշի Օսմ. երեսփոխանը Գեղամը իր «Հողային հարց» հրատարակութեան մէջ նոյնը կ'ըսէ, խօսելով առաւելապէս Տաւրոսի շրջանի մասին :

«Խաֆիրառուն կրնայ իր այս տիրապետութեան իրաւունքը ծախել ուրիշի : Խաֆիրառուն տուրք կ'առնէ, երբ հայուն տղան մանաւանդ աղջիկը ամուսնանան : Կարողութեան համաձայն՝ 40-60-100 դրուշ կային :»

Խաֆիրութիւնը կը տարածուէր առաջ միւս Մշոյ դաշտի հարաւակողմի լեռնարագուկներու վրայ ալ. օրինակ՝ Առաքելոյ վանքը՝ Բագրանցիներուն կուտար ատենին Խաֆիրութիւն, նոյն ատենները՝ լեռներէ դաշտ եկան հաստատուած հայերէ իսկ՝ Խաֆիրառու Հայեր եկեր ու հարկը պահանջեր են կային :

Արդէն Գեղամի բսելով այ՝ խաֆիրութիւնը աւազակային զեղծում մը չէ, այլ Հայ ու Քիւրդ իշխանութեան իրաւունք մը. Հայերը այդ առանձին նախարարական հարկառու վիճակը շատոնց թողած են, լեռնականութենէ հեռացած. իսկ Քիւրդերը դեռ կը պահեն իրենց իշխանութեան իրաւունքը, որուն վերջ տալը Օսմ. Կառավարութեան պարտքն է իբր Օսմանցիներու պետութիւն մը :

Ըստ Գեղամի՝ այժմ Մշու շրջանի մէջ «խաֆիրառու ցեղերէն ծանօթ են՝ Պալաքցիները (որոնք արարելէն ու հայերէն կը խօսին) ու կաւանդուի թէ՛ իսլամացած հայ ընտանիքի մը սերունդն են, մօտաւորապէս 2000 հրացանակիրներ) — Մօտկանցիներ, Խարզանցիներ, Ճէլալցիներ, Մուսեանցիներ, Բագրանցիներ, մըշքօթանցիներ կային :»

Չը նայած որ Օսմ. Սահմանադրութեան հրատարակութեամբ՝ Օսմ. փարլամէնթի մէջ ջնջուեցաւ խաֆիրութեան տուրքը, բայց շատ տեղերը գործնականի մէջ կը գործադրուի իճարէ անուան տակ կային : Այս մասին ցուցակ մը կը հրատարակէ նոյն երեսփոխանը :

Բազմաթիւ են և թրքացած քիւրդեր, ասոր պատճառները շատ են, գլխաւորը փնտուելու է իսլամ կրօնակցութեան, թիւրք քաղաքակրթութեան մէջ :